**Համաձայնագիր N 2**
**13.08.2008(տասներեքը օգոստոսի երկու հազար ութ) թվականին կնքված**
**թիվ 6615(վեց հազար վեց հարյուր տասնհինգ) պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան    քսանյոթը հունիսի երկու հազար քսաներեք թվական

**«Էրեբունի-Պլազա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (հասցե՝ ք. Երևան, Վ.Սարգսյան 26/1 (քսանվեց կոտորակ մեկ), պետական գրանցման համարը՝ 286.110.05857, գրանցման ամսաթիվը 25.10.2005թ. (քսանհինգը հոկտեմբերի երկու հազար հինգ), վկայական՝ 03 Ա 070030) այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս լիազորված անձ Մարինե Պետիկի Ղազարյանի (ծնված 16.11.1995թ. /տասնվեցը նոյեմբերի հազար ինը հարյուն իննսունհինգ/ նույնականացման քարտ 008516726, տրված՝ 26.10.2016թ. /քսանվեցը հոկտեմբերի երկու հազար տասնվեց/, 003-ի կողմից, հծհ 7011950330, բնակության վայրը՝ Արարատի մարզ, Արտաշատ, Ազատավան, Թումանյան 62), որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից և **Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն** (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 4/չորս/), այսուհետ՝ «Ենթավարձակալ», ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղար՝ Մ. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, և որի անունից համաձայն 20.07.2023թ.(քսանը հուլիսի երկու հազար քսաներեք) տրված լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Վահե Դավիթի Թորոսյանը (ծնված 15.07.1994թ. /տասնհինգը հուլիսի հազար ինը հարյուն իննսունչորս/, անձնագիր՝ AU0461056, տրված՝ 15.10.2021թ. /տասնհինգը հոկտեմբերի երկու հազար քսանմեկ/, վավեր է մինչև 15.10.2031թ. / տասնհինգը հոկտեմբերի երկու հազար երեսունմեկ/, 004-ի կողմից, հծհ 2507940727, հասցե՝ ք. Երևան, Սունդուկյան 28Ա բն. 3/) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Սույն համաձայնագիրը կնքվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 (երկու հազար ութ) թվականի հուլիսի 17-ի (տասնյոթ) N 766-Ա (յոթ հարյուր վաթսունվեց) և 2023 (երկու հազար քսաներեք) թվականի մայիսի 18-ի (տասնութ) N 747-Ա (յոթ հարյուր քառասունյոթ) որոշումները և 13.08.2008 (տասներեքը օգոստոսի երկու հազար ութ) թվականին կնքված թիվ 6615 պայմանագրի 16.3 և 16.4 կետերը:

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրի 16.1 կետում նշված «մինչև 13 (տասներեքը) օգոստոսի 2008 (երկու հազար ութ) թ.-ը» բառերը փոխարինել «մինչև 13 (տասներեքը) օգոստոսի 2028 (երկու հազար քսանութ) թ.-ը» բառերով:

## 2.Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը կնքելու պահին Շինությունը գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում, սակայն ծանրաբեռնված է վարձակալությամբ համաձայն Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից 15.06.2023թ. (տասնհինգը հունիսի երկու հազար քսաներեք) տրված N ՄՏ-15062023-01-0350 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի:

2.2 Կողմերը հավաստում են այն փաստը, որ Շինությունը 14.08.2008թ.-ից (տասնչորսը օգոստոսի երկու հազար ութ) հանձնված է պաշտոնաթող նախագահ Ռոբերտ Քոչարյանի օգտագործմանը:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից, կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Սույն համաձայնագիրն ենթակա է նոտարական վավերացման, իսկ համաձայնագրով ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

2.6 Սույն համաձայնագիրն օրինական է միայն այն դեպքում, եթե այն ստորագրված է կողմերի կողմից և վավերացված է նոտարի կողմից:

2.7 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է նոտարական գործում, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում գրանցելու համար: Համաձայնագրի օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| Վարձատու | Ենթավարձակալ |
|---|---|
| «Էրեբունի-Պլազա» ՍՊԸ | Պետական գույքի կառավարման կոմիտե |
| ք. Երևան, Վ.Սարգսյան 26/1 | ք. Երևան, Տիգրան Մեծի 4 |
| «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | ՀՀ ՖՆ աշխ. գործառ. Վարչություն |
| Հ/Հ 220410125490000 | Հ/Հ 900011145027 |
| ՀՎՀՀ 02580003 | ՀՎՀՀ 02528489 |
| Լիազորված անձ՝ | Կոմիտեի գլխավոր քարտուղար ՝ Մ. Մարգարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| | Կ.Տ. |

կան ակտի կոդ: 450-20230627-117-7056784
կան ակտի գաղտնագիր: UWRDJH

ազար քսաներեք թվականի հունիսի քսանյոթին

ամաձայնագիրը վավերացված է իմ՝ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա ելյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ, կողմերի թյունը, գործունակությունը իրավաբանական անձի իրավունակությունը, նրա յացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 4610

ծված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ մ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի րապետության օրենքների:

տար Սուսաննա Հենրիկի Դանիելյան

RA YEREVAN NOTARIAL TERRITORY NOTARY PUBLIC DANIELYAN

РА НОТАРИАЛЬНАЯ ТЕРРИТОРИЯ ЕРЕВАН НОТАРИУС ДАНИЕЛЯН

20067148